



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«08» «12» 2011թ
(0255 2 -21 -76)

ԼՄԱՀ 169

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏ
Պ-ԲՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու թիվ 43,44
որոշումները:

Առդիր 3 թերթ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝

Վ.ԽԱԶԱՏԻՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«01» Դեկտեմբերի 2011թ

№ 43

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՄՇԱԿՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՍՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Տիմ օրենքի 16 – ըր հոդվածի 2 – ըր կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ ՀԵՆԿ ՀԿ – ի կողմից իրականացված սոցիալական կարիքների գնահատման ուսումնասիրության և վերլուծության արդյունքներին և վերջինիս կողմից № ССОЈ/388/ 25.10.2011թ – ի գրությամբ ներկայացված առաջարկությունները ըստ կից հավելվածի
2. Ընդրկել համայնքի առաջիկա զարգացման քառամյա ծրագրում:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ			
ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ	
			Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ
			Հ. ՀԱՄԲԱՐՅԱՆ
			Լ. ՄԱԳՈՅԱՆ
			Մ. ԱԹԻԿՅԱՆ


ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքի քառամյա ծրագիրը մշակելիս ուշադրության կենտրոնում պահել համայնքի բնակչության սոցիալական խնդիրները, ստեղծելով հնարավորություններ դրանց լուծման համար:
2. Համայնքի ղեկավարի աշխատակազմում ունենալ սոցիալական պաշտպանության ոլորտի համար պատասխանատու աշխատող կամ բաժին, որին (աշխատողներին) անհրաժեշտ է առաջարկել համայնքային վերապատրաստման սոցիալական ծրագրեր:
3. Համայնքի քառամյա զարգացման ծրագրերում սոցիալական ծրագրեր ներառելու հնարավորության դեպքում դրանք մշակել առաջարկված մեթոդաբանությամբ՝ համայնքի բնակչության շահագոգիտ կողմերի մասնակցությամբ:
4. Համայնքի սոցիալական կարիքների գնահատման ժամանակ հրավիրել տվյալ համայնքը սպասարկող սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի ներկայացուցիչներ:
5. Սոցիալական ծրագրերի մշակման ժամանակ օգտագործել, որպես նպատակ, նախընտրական ժամանակահատվածում բնակչության կողմից բարձագրված հարցադրումները և դրանց լուծմանն ուղղված խոստումները:
6. Անհրաժեշտ է ճիշտ գնահատել համայնքի ռեսուրսները՝ բնակչության մասնագիտական ներուժը:
7. Համագործակցել շահագոգիտ բոլոր կողմերի հետ՝ սոցիալական ծառայություններ տրամադրող պետական պետական ծառայություններ տրամադրող պետական կազմակերպություններ, սոցիալական ոլորտներում գործող հասարակական կազմակերպություններ, անհատ անձինք – բարեգործներ, անհատ քաղաքացիներ (կամավորներ):
8. Հարևան (սահմանակից) համայնքների հետ ընդհանուր սոցիալական խնդիրներ ունենալու դեպքում համագործակցել այդ համայնքների հետ, մշակել և իրականացնել համատեղ ծրագրեր՝ դրանց արդյունավետության մեծացման նպատակով:
9. Օգտագործել համայնքի հնարավորությունները «Ֆինանսական միջոցների հայթաթման» ուղղությամբ, դրանց միջոցով իրականացնելով սոցիալական ծրագրեր:

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ.ԽԱԶԱՏՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՆՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«01» Դեկտեմբերի 2011թ

№ 44

ՈՐՈՇՈՒՄ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ – Ի ՃՇՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 16 – րդ հոդվածի 3 – րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 – րդ հոդվածի 5 – րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Լոռու մարզի Արևաշող գյուղական համայնքի 2011թ – ի բյուջեն

1. Եկամտային մասով՝ վարչական մասով 40827500 (քառասուն միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ
2. Ֆոնդային մասով՝ 15520000 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ
3. Ծախսային մասով՝ վարչական մասով 40827500 (քառասուն միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ
4. Ֆոնդային մասով՝ 16689400 (տասվեց միլիոն վեց հարյուր ութանասունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ	
			Ա.ՀԱՄԲԱՐՅԱՆ
			Հ. ՀԱՄԲԱՐՅԱՆ
			Լ.ՄԱԳՈՅԱՆ
			Մ.ԱԹԻԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ